

Առարկայական հեղինակային  
ծրագիր՝ դպրոցական բաղադրիչի  
շրջանակներում

Ծրագրի անվանում՝ Մաթեմատիկան՝  
առավել հասանելի

# Նկարագիր

Նախատեսված է իրականացնել IV դասարանում <<Մաթեմատիկա>> առարկայի շրջանակներում, դպրոցական բաղադրիչի հաշվին, որն ապահովելու է ուսուցման տարբերակված մետոցում :

# Նպատակ

**Ոստւցանող նպատակ:** Անհատականացման կամ շերտավորման միջոցով կատարելագործել աշակերտների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, նպաստել ուսումնական ծրագրի պահանջների իրականացմանը, յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Այս ճանապարհով փոքրացնել նրա բացարձակ կամ հարաբերական հետ մնալը / այսինքն՝ իր հնարավորությունների մակարդակից հետ մնալը / , խորացնել և ընդլայնել աշակերտների գիտելիքները՝ ելնելով նրա հետաքրքրություններից և ընդունակությունների առանձնահատկություններից: Բացահայտել յուրաքանչյուր աշակերտի փաստացի և պոտենցիալ / ենթադրյալ / հնարավորությունների բացահայտում:

**Չարգացնող նպատակ:** Ձևավորել և  
զարգացնել տրամաբանական և  
ստեղծագործական մտածողությունը՝  
հենվելով զարգացման մերձակա գոտուն:

# Ակնկալվող արդյունքներ

Ծրագրի ավարտին սովորողները կունենան՝

- ծրագրային նյութի շրջանակներում կայուն նվազագույն գիտելիքներ,
- ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ,
- թիմային աշխատանքում կարողությունների լիարժեք դրսևորման հմտություններ:

# . Իրականացման պլան

- Ուսումնական գործընթացը կազմակերպել աշակերտների որոշակի խմբի հատուկ առանձնահատկությունների հաշվառումով / նկատի են առնվում խմբային և անհատական առանձնահատկությունները / :
- Հայտորոշիչ թեստի միջոցով աշակերտներին բաժանել չորս խմբի:

## Դելտա IV աստիճան / 4-5 միավոր /

Չորրորդ աստիճանը բնութագրվում է դպրոցին թույլ նախապատրաստվածությամբ, 2-3 հոգեկան գործընթացների կամ համապիտանի ուսումնական կարողությունների անբավարար ձևավորվածությամբ: Այդ խմբի աշակերտները նյութը յուրացնում են բազմակի վարժություններ կատարելուց հետո և ոչ միշտ՝ ամբողջ ծավալով, դժվարանում են էականի առանձնացման մեջ անգամ ամբողջ դասարանի հետ ընդհանուր վարժողական աշխատանք կատարելուց հետո, գիտելիքներին տիրապետում են ավելի երկար ժամանակահատվածում, քան հաջորդ խմբի երեխաները:

## Գամմա III աստիճան / 6-7 միավոր/

Երրորդ խմբում այն աշակերտներն են, որոնք տիրապետում են գիտելիքների և կարողությունների պարտադիր հիմնական ծավալին: Ուսուցչի օգնության կարիքն ունեն սովորածի ընդհանրացման գործում: Այդ խմբի երեխաները Էականը , օրինաչափն անմիջապես չեն կարողանում առանձնացնել, որոշակի վարժողական աշխատանքից հետո կկարողանան մասնավորի մեջ տեսնել ընդհանուրը:



## Բետա II աստիճան / 8-9 միավոր/

Երկրորդ խմբում այն աշակերտներն են, որոնք դպրոցին նախապատրաստվածության բարձր մակարդակում են, տիրապետում են գիտելիքների և կարողությունների հիմնական ծավալին: Այդ խմբի երեխաները ուսումնական նյութը յուրացնում են մարզողական աշխատանքներից հետո: IV աստիճանում ընդգրկված աշակերտների համեմատությամբ նրանցից ավելի երկար ժամանակ է պահանջվում գիտելիքների յուրացման համար:

## Ալֆա I աստիճան / 9-10 միավոր /

Առաջին խմբի երեխաներն ունեն արտահայտված ճանաչողական ունակություններ, ստեղծագործական և տրամաբանական առաջադրանքներ կատարելու կարողություններ: Առանց դժվարության ընկալում են ուսումնասիրվող նյութը, առանձնացնում են գլխավորը, էականը, օրինաչափը ,մասնավորում տեսնում են ընդհանուրը, ունակ են ինքնուրույնաբար ընդլայնել ,զարգացնել դասի ժամանակ արված բացահայտումները ,հեշտությամբ կարողանում են ստացած գիտելիքները գործադրել նոր իրավիճակներում,կարճ ժամանակահատվածում հասնում են գիտելիքների բարձր մակարդակի:

- Յուրաքանչյուր շաբաթ մաթեմատիկայի մեկ դաս անցկացնել ձևավորված խմբերում
- Դասերն անցկացնել թեմատիկ պլանին համապատասխան, որը նախատեսված կլինի 34 շաբաթվա համար:

- Ներկայացված խմբերի կազմը ուսուցման ընթացքում փոփոխությունների երթարկել. աշակերտի հաջողությունների հարցում ժամանակին կազմակերպված հայտորոշումը / նպատահարմար է 8 շաբաթը մեկ անգամ / թույլ կտա ճկուն կերպով փոխել խմբերի կազմը: Դա հնարավորություն կտա ուսուցման գործընթացը կառուցել դժվարության օպտիմալ / ամենահամապատասխան / մակարդակի վրա:

- Տարեվերջյան գիտելիքների ստուգման միջոցով ամփոփել արդյունքները:

Ծրագիրը հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողները կպարգևատրվեն ավարտական հավաստագրերով:

- Յուրաքանչյուր խմբում աշխատանքը կազմակերպել տվյալ աստիճանում ընդգրկված աշակերտների կարիքներին համապատասխան:

## **. Շարունակականության ապահովում**

**Ծրագիրը կարելի է իրականացնել բոլոր դասարաններում, տարբեր առարկաների շրջանակներում՝ յուրաքանչյուր տարվա հիմքում դնելով նախորդ տարվա արդյունքները:**

**Ծրագիրը կարելի է իրականացնել նաեւ հեռավար:**

Ծրագրին կից ներկայացված է

1. 4 աստիճանների համար դասի մեկական օրինակ՝ SMART Notebook /Էլեկտրոնային գրատախտակ/ ծրագրով
2. թեմատիկ պլանավորում՝ նախատեսված 34 շաբաթվա համար
3. ծրագրի իրականացման ընթացքում ուսուցչին ներկայացվող պահանջներ